

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ



ՆՈՐ ՇՐՋԱՆ — ԹԻԻ Ե

ՕԳՈՍՏՈՍ 1900

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

	Էջ
1. Աւանդութի ն Հայաստանեայց Եկեղեցւոյ . — Ոս Եանկ եւ Սոսիալական.	129
2. Բարոց . — Ազանութի ն .	140
3. Ժամանակ Չունիւնք . (Թարգմ. ի Գաղղ.) .	146
4. Կրօնական Դաստանդութիւն . — Թշխասութիւն Քրիստոսի .	150
5. Խրատական Մարկոսի Աւրելիոսի .	153
6. Բանասիրական . — «ՈՐ ԷՆ» .	156

Հանդիսիս բաժանորդագիւնն է ամեն
տեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանկ,
վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Ֆրանկ թղթատարաւ:

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան
վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել
առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

Ա Մ Ս Ա Ք Ե Ր Ք

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն Ե ւ Ա Ս Տ Ո Ւ Ա Մ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ Ե Ա Ռ Ն Տ Ե Ա Ռ Ն Մ Կ Ր Տ Ջ Ի

Մ ր ք ա զ ն ա զ ո յ ն Կ ա ր թ ու լ ի կ ո ս ի Ա մ ն ն ա յ ն Հ ա յ ո յ

Թ Ի Ի 5

Ն Ո Ր Շ Ր Ջ Ա Ն

Յ Գ Ո Ս Տ Ո Ս 1900

Ա Բ Ա Ն Գ Ո Ւ Թ Թ Ի Ն

Հ Ա Յ Ա Ս Տ . Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ

Ո Ս Կ Ե Ա Ն Ի Ե Ի Ս Ո Ւ Բ Ի Ա Ս Ա Ն Ի

1 . Աղբիւրք պատմութեան Ս. Ոսկեանց . — Սրբոց Ոսկեանց և Սուքիասանց աւանդական պատմութեան ժամանակագրութիւն կարի դժուարիմաց և անհաւանական կըթուի : Բայց և այնպէս պատմութեան ստուգութիւնը անուրանալի է : Մեր եկեղեցին հետեւալ երեք տուն շարականով այդ պատմութեան գլխաւոր կէտեր կըհաստատէ . —

«Որք արժանաւորեցայք կոչիլ յաշակերտութիւն առաքելոյն Թադէոսի . եւ աստուածային հրով մաքրութեան ոսկի փորձեալ գրտայք 'ի ընակարանս հրեշտակաց . ով երանելի սուրբ Ոսկեանք , բարեխօսեցէք առ Տէր մաքրել զմեզ 'ի մեղաց մերոց :

«Որք անհրաժեշտ դաւանութեամբ քարոզեցէք ըր-
Քրիստոս 'ի գրունս թագունւոյն . մկրտելով զքաջ նա-
հատակսն 'ի յակունս եփրատայ ի ծաղկազարդ վայել-
չութիւնսն . ով :

«Որք անպարտելի մնացէք 'ի հրապուրանաց որդւոյ
թագաւորին . չարչարեալք վասն Քրիստոսի , արագա-
պէս խողխողեցայք պատարագ ընդունելի . ով » :

Մեր եկեղեցւոյ այս աւանդութիւնը կը հաստատու-
ուի երրորդ դարու մէջ ապրող և փայլող յոյն պատ-
մագիր Տատիանոսի գրուած ովն այս մասին , յորմէ
հայազգի անծանօթ հեղինակ մի քաղուած օրէն
առնելով՝ կը պատմէ (Տես, Սոփերք Հայկականք, ԺԹ) :

2 . Դեսպանութիւն Սրբոց Ոսկեանց եւ դարձ
նոցա 'ի Քրիստոս :— Հռովմայ կայսրն հինգ հոգիէ
բաղկացեալ մի զեօպանութիւն կ'առաքէ 'ի Հայս
առ գրունս Արտաշէս Բ . արքային , որ թագաւորեաց
88 էն մինչև 128 ամն Քրիստոսի :

Գեօպանութեան նպատակն յայտնի չէ . այլ զեօ-
պանք իւրեանց պաշտօնը կատարելէն յառաջ կամ
յետոյ 'ի վերադարձին քրիստոնեայ քարոզչաց
կը հանդիպին , և հաւատալով՝ կը լուսաւորուին
և կը մկրտուին 'ի Քրիստոս : Մեր վերոյիշեալ
չարական որպէս և Տատիանոսի աւանդութիւն
կը համարին թէ նոյն իսկ Սրբոյն Թաղէոսի
Առաքելոյն աշակերտած են Ս . Ոսկեանք : Բայց
Ս . Թաղէոսի առաքելութեան և Արտաշէս Բ . ի
թագաւորութեան ժամանակամիջոցն այնքան երկար
է որ բացարձակապէս անհնարին կը թուի այսպէս
լինել . աւելի հաւանական է և աւելի դիւրին հաս-
կանալի կը լինի եթէ ասե՛նք Ս . Թաղէոսի աշակերտ-
ներէն մին որ թերևս նոյնպէս Թաղէոս կը կոչուէր՝
եղած է լուսաւորիչ , մկրտիչ և ձեռնադրող Ս .
Ոսկեանց : Իւրեանց մեծաւորի անուանը նայելով,
որ յունական ձայնով Խրիստի կը կոչուէր և հայերէն

Ոսկի ասել է , ազգաւ յոյն էին . կամ հռովմայեցի լինելով , ըստ սովորութեան այնր դարու , իւրեանց լատինական Աւելիոս անունը յունախօս ազգաց մէջ յոյն թարգմանութեամբ Խրիստի կըզգրէին , ինչպէս որ հայ թարգմանիչն ևս հայերէնի փոխելով՝ Ոսկի կըզգրէ : Ոսկեանք երևի այլ ևս չվերագարձան 'ի հռովմ իւրեանց դեսպանութեան մասին համար տալու , կամ զկնի վերագառնալու՝ վերստին եկին 'ի Հայս . այս անգամ իբրև Քրիստոսի դեսպանք՝ աւետարանելով և քարոզելով : Իւրեանց կեդրոնավայր շինած էին Մաղկէ կոչուած տեղն « 'ի լերինս ուրեմն ծմակայինս յակունս Եփրատայ , » ուր զկնի քարոզութեան կամ աւետարանական ուղևորութեանց կրօնաւորական կրթութեամբ՝ աղօթիւք և խորհրդածութեամբ ժամանակ կ'անցնէին :

3 . Մաթիցիկ եւ պաւսական իբխանք յարժուցի Հայոց :— Յայտնի է որ Արտաշէս Բ . ի թագուհին Սաթինիկ՝ Ալանաց թագաւորի դուստրն էր զոր ստացաւ 'ի կնութիւն 'ի նշան հաշտութեան 'ի մէջ երկոցուն թագաւորացն : Սաթինիկ թագուհւոյն ընկերացան յարքունիս Արտաշէսի բազում երևելի անձինք յալանաց ազգէն իբրև հարսնածուք . նոյնպէս Սաթինիկան մերձաւոր աչգականներէն ոմանք եկան յԱրտաշատ և Արտաշէս թագաւորի կողմանէ մարգասիրութեամբ և պատուով ընդունուեցան և հայկական նախարարութեան աստիճանի բարձրացան : Սաթինիկ Արտաշէսի սիրեցեալ ամուսինն էր , որ իւր օրիորդութեան միջոցին՝ մարմնաւոր գեղեցկութեամբ և ճարտարաբան լեզուաւ յաջողեցաւ հայոց արքայի ցասումն զիջուցանել , իւր եղբայրն Սաթէն ազատել 'ի մահուանէ , երկու պատերազմիկ զօրքերը 'ի հաշտութիւն բերել և մի-

անդամայն Արտաշէսի անձնական սիրոյն արժանանալ : Հայ բանաստեղծք չեն մուցած Սաթիւնկան դեղեցկութիւն և ուրիշ հաճելի յատկութիւնք գովաբանելու : Մէկը՝ Ալանայ իշխանին ասել կուտայ .

«Եւ ուստի՞ տացէ քաջ արին Արտաշէս բիւրս 'ի բիւրուց ևւ հազարս 'ի հազարաց ընդ քաջ ազգուոյ կոյս օրիորդիս ալանաց» :

Նոյնպէս և նորա հարսանեաց շքեղութիւն առասպելական ճոխութեամբ կ'երգեն .

«Տեղ ոսկի տեղայր 'ի փեսայութեանն Արտաշիսի . տեղայր մարգարիս 'ի հարսնութեանն Նաթիւկանն» :

Յայտնի չէ թէ այս ալանական խումբ հայոց արքունեաց մէջ ինչ կրօնական համոզման կրէնտեէին . յամենայն դէպս Արտաշէսէն և իւր հայազգի հպատակներէն տարբեր կրօնի վարժուած էին և Հայոց (հեթանոսական) կրօնին ևս հաւանօրէն շատ չէին հաւաներ . մանաւանդ որ պանդխտութիւնն ևս իւրեանց հայրենեաց սովորութիւններ և ծէսեր յորոց զրկուած էին այժմ , աւելի սիրելի և ցանկալի կ'առնէր , և իւրեանց պանդխտութեան երկրի սովորութիւններ թերևս խորթ ու անհաճոյ կ'երեցնէր :

4 . Երկրորդ գալուստ Ս . Ռսկեանց յԱրտաշէս :— Այսպէս ուրեմն առաւել կամ նուազ կրօնական դժգոհութեամբ Արտաշէսի արքունեաց մէջ մէկ կողմէ , և թագուհւոյ և ալանական խումբի գերակշիռ ազդեցութեամբն միւս կողմէ , պատրաստուած էր հողի երկնից արքաութեան սերմերն ընդունելու , երբ Ս . Ռսկեանք երկրորդ անգամ ներկայացան Հայոց արքային . այս անգամ տարբեր դասպանութեամբ , և «ժանուցանէին նմա վասն Քրիստոսի աստուածութեանն զկուոցն յանդիմանելով զտկարութիւն» :

Ս. Ոսկեանք՝ իւրեանց նախորդ (քաղաքական) դեսպանութեան շնորհիւ արդէն ծանօթ էին և երևի սիրուած և յարգուած ևս էին հայոց արքունեաց մէջ . այնպէս որ առանց դժուարութեան կարող եղան երկրորդ անգամ ներկայանալ և իւրեանց երկնային պատգամն յայանել Արտաշէսին, որ իւր ծանօթ մարդասիրութեամբ և քաղաքավարութեամբ, «իւրե լսէր, ոչ անտեղի զբանս նոցա առնէր, ասելով . եթէ Լուեալ է իմ վասն այդոցիկ և յայլոց բազմաց . բայց անպարապ լեալ 'ի պատերազմէ, հրաւիրէր զնոսա լսել զնոյն բանս յայլում ժամանակի . և ինքն հեռանայր պատերազմաւ յարևելս» :

Թագաւորի մեկնելէն վերջ Ս. Ոսկեանք գիմեցին թագուհւոյն և ալան նախարարաց՝ մերձաւորաց և ազգակցաց Սաթիրեկան, «զոր Աստուած իսկ իմաստնացոյց զմիտս նոցա ընդունել զբանն կենաց» : Իսկ զբան թագուհին ևս յօժարութեամբ կըլսէր . և երևի իւր ազգակից տասնեօթն նախարարաց հետ միասին հաւատաց և քրիստոնէացաւ : Ս. Ոսկի կամ իւր ընկերներէն մին որ քահանայական ատիճան ունէր՝ տեսնելով նոցա հաւատն, «'ի մէջ դիչերի յարուցեալ կոչեաց զնոսա յեզր գետոյն՝ տալով նոցա զմկրտութիւն քրիստոսական լուսաւորութեան . և 'ի կենաց դպրութեան զանուանս նոցա գրելով, արժանացուցանէր սուրբ Հոգւոյն» :

Ս. Ոսկեանց առետարանական գործունէութեան մասին յԱրտաշատ քաղաքի միայն այսքան առանգուած է . բայց անհաւանական կըլթուի որ մայրաքաղաքի բազմաթիւ բնակիչներն անտես առնէին, մանաւանդ աղքատ գասակարզն որ իսկզբանէ անտի ամենաջերմ և ամենէն առաջին հետեողներ եղած են Ս. Աւետարանի քարոզութեան :

Քրիստոնէական կրօնի սովորական ընթացքն և ներքին յատկութիւններն գիտցողի համար որևէ տարակոյս չի մնար որ Ս. Ոսկեանք Արտաշեսի արքունեաց գիմնէն յառաջ և յետոյ Արտաշատի և շրջակայից ժողովրդեան կըքարոզէին և կ'աւետարանէին, և մեր գիտցածէն շատ աւելի—[Թերևս հազարաւոր—անձինք մկրտած էին գաղտնապէս : Անտարակոյս այսպիսի անհատական և գաղտնի քարոզութեանց և մկրտութեանց շնորհիւ հայոց միտքեր կըպատրաստուէին այն բոլորական դարձի համար, որով մէկ դար վերջ մեր ազգի ամբողջութիւնը լուսաւորուեցաւ ճշմարտութեան լուսով :

Ճ . Հալածումն Ս. Ոսկեանց :—Արտաշեսի երկու որդիքն Վրոյն և Վնոյն շատ շուտով Ս. Ոսկեանց գաղտնի գործունէութեան լուրն առին, և քաղաքական մնասաբեր հետեանքներ գուշակեցին, որ իւրեանց հօր բացակայութեան միջոցին կրօնի այդքան մեծ փոփոխութիւն տեղի կ'ունենար հայոց արքունեաց մէջ, որոյ օրինակն անշուշտ պիտի ազդէր շատ շուտով և մեծ արագութեամբ Արտաշատի և հայկական ուրիշ գաւառաց մէջ, եթէ ազգու միջոցներով առաջը չառնուէր : Ուստի ամենէն յառաջ կըփութան զՍ. Ոսկեանս աքսորել, որ մինչ ցարդ իւրեանց նախկին քաղաքական աստիճանի և պաշտօնի շնորհիւ, յարգանօք և մեծարանօք ընդունուած էին արքունեաց մէջ . և ինչպէս տեսանք, նա ինքն Արտաշէս քաղաքավարութեամբ վարուած էր նոցա հետ երբ երկրորդ անգամ ներկայանալով՝ Աւետարանի պատգամն կըհաղորդէին նմա, և խոստացած էր 'ի վերադարձին նորէն լսել նոցա : Արքայորդուոց հալածանքներէն ստիպեալ կ'առանձնանան Արածանի գետակի (որ Եփրատայ մէկ ճիւղն է) աղբերականց մօտերն, և զինքեանս ժամանակ մի առանձնական աղօթից և կրօ-

նական կրթութեանց կընուիրեն :

Վրոյն և Վնոյն քրիստոնէութեան գէժ սկսած հալածանքն շարունակեցին : Արդարև դիւրին էր և որևէ անհաճոյ հետեանք չէր կրնար ունենալ օտարազգի Ոսկեանց արտաքսումն մայրաքաղաքէն . բայց այնքան դիւրին չէր Թագուհւոյն և իւր քրիստոնէացած նախարարաց գէժ գնելն կամ բռնութիւն գործ ածել : Միակ մըջոցն էր յորդորել և թերևս քաղաքական այլ և այլ պատճառներով ջանալ համոզել որ քրիստոնէութիւնն ուրանան : Ի վերջոյ յաջողեցան զթագուհին Սաթինիկ յետս գարձնելու քրիստոնէական ճանապարհէն . բայց նախարարներն անսասան մնացին : Արքայորդիք մեծ մտատանջութեան մէջ էին , վասն զի «արքս այսոքիկ փառաւորք և հզօրք կարգեալ 'ի վերայ դասուց , և 'ի գործ պատերազմի առաջինք» . ուստի շատ կըթախանձէին «զի 'ի բաց դարձցին յերկրպագութենէն Քրիստոսի» : Բայց 'ի զուր . նոքա անյողդողդ մնացին և յանձն չառին դառնալ 'ի հեթանոսութիւն : Արքայորդիք այժմ զՍ. Ոսկի և իւր ընկերները բերել տուին և փորձեցին նոցա վերայ բռնանալով՝ համուլել թագուհւոյն ազգական նախարարներն յուրացութիւն բերել : Բայց այս հնարքն ևս ապարդիւն մնաց : Վասն զի Ս. Ոսկեանք փոխանակ արքայորդուց հրահանգի համեմատ զնախարարսն յուրացութիւն յորդորելու , «առաւել ևս հաստատէին զնոսա 'ի հաւատս և ինքեանք զազտագնաց եղեալք անդրէն դառնային» : Վրոյն և Վնոյն զայրանալով իրեանց այս ջանից անյաջողութեան վերայ զինուորներ կըզըկեն Ս. Ոսկեանց ետեւ , և բռնելով կըկոտորեն զնոսա իւրեանց մենարանի առջև :

6. Նահաւսակութիւն Արքոց Սուրբաւանց .—Սաթինիկան ազգական նախարարք իւրեանց մկրտու-

Թեան առթիւ նոր անուններ ստացան: Իւրեանց գլխաւորի անունն էր Բահադրաս կամ Բարաքադրաս, որ յետ մկրտութեան փոխուեցաւ 'ի Սուքիաս. և այս անուամբն այդ ամբողջ խումբն եկեղեցական պատմութեան մէջ կը կոչուի Սուքիասանք: Արդ Սուքիասանք լսելով իւրեանց վարդապետաց՝ Սրբոց Ոսկեանց նահատակութեան լուրն, և տեսնելով որ թագաւորորդոց յարուցած հալածանքն օր ըստ օրէ կը սաստկանայ, և միանգամայն նկատելով որ իւրեանց ազգական թագուհի Սաթինիկն քրիստոնէական հաւատն թողած այլ ևս տարակուսական աչօք կը նայի և կը վարուի իւրեանց հետ, խմբովին կը թողուն հայոց արքունիքն և Ջրաբաշխ կամ Սուկաւէտ լեւան վերայ կրօնաւորութեամբ կը ճգնին երկար տարիներ:— Յիշուած չէ թէ Արտաշէս Բ. իւր վերադարձին ինչ ընթացք բռնեց քրիստոնէից նկատմամբ. բայց երևի իւր որդոց հետեւած քաղաքականութեան հաւանեց, քանզի Սուքիասանք մնացին իւրեանց պանդխտութեան մէջ, և թագուհին ևս հաւանօրէն հեռզհետէ բոլորովին մոռացաւ Քրիստոսի սուրբ հաւատն:

Բայց զկնի բազում ամաց Ալանաց Գիգիանոս թագաւորն կը տեղեկանայ թէ իւր նախկին իշխաններէն ոմանք որ Սաթինիկան հետ Հայոց երկիրը գնացած էին, քրիստոնէական կրօնին հետեւելուն պատճառաւ հալածուած էին Հայոց թագաւորէն, և Սուկաւէտ լեւան վերայ մեծաւ տառապանօք և նեղութեամբ կ'ապրէին, իւրեանց միակ յոյսը Քրիստոսի վերայ գրած լինելով: Գիգիանոս « ընտրեաց 'ի զօրաց իւրոց արս քաջս և անուանիս, և առաքեաց յերկիրն Հայոց հանդերձ սպառազիւնօք 'ի Սուկաւէտ լեւան, և ասէ. Եթէ գտանիցէք, բազում պարգևօք հաւանեցուցէք գալ այսր, ապա թէ ոչ հաւանեսցին գալ, 'ի սուր սուսերի

մաշեալիքո՞ւ : Վկայաբանն երկարօրէն կը պատմէ Ս. Սուքիասանց նահատակութեան պարագայներ , և մի երկար խօսակցութիւն կ'արձանագրէ իբր թէ տեղի ունեցած ի մէջ սրբոցս և հալածչաց իւրեանց , որ աւելի վկայաբանի անմեղ երեակայութիւն և սրտի բաղձանք կը պատկերացնէ քան թէ իրական դիպաց պատմութիւն : Գիգիանոսի պաշտօնեայք տեսնելով որ ոչ սպառնալիք և ոչ յորդորանք ցանկացեալ արգիւնքն ունեցաւ , և Սուքիասանք տակաւին անյողգողգ կը մնան իւրեանց հաւատոյն վերայ , և չեն ուղեր դառնալ ի հին կռապաշտութիւն հայրենեաց իւրեանց , տասն և հինգն 'ի նոցանէ սրով կոտորեցին և մի խոր գուբի մէջ ձգեցին նոցա մարմիններ և կարկառ քարանց կուտեցին 'ի վերայ : Կը պատմէ վկայաբանն թէ այս գուբ գերեզմանն այսպէս մնաց մինչև Ս. Գրիգոր Լուսաւորչի ժամանակ , որ հանգամանքն տեղեկանալով՝ մի վկայարան և վանք շինել տուաւ տեղւոյն վերայ , և « առաջին վանաց երէց թողեալ զԱբաս ոմն անուն » յիւրոց աշակերտացնո՞ւ :

Ինչպէս վերը տեսանք , Սուքիասեան քրիստոնէացեալ նախարարք թուով տասն և եօթն էին , յորոց տասն և հինգն կը յիշուին իբրև մարտիրոսացեալ : Միւս երկուսն որք ամենէն երիտասարդ էին՝ չկարողացան դիմանալ չարչարանացն և փախան լեւրան խորշերի մէջ ծածկուեցան , և զկնի մարտիրոսութեան ընկերացն , դարձան և կատարման տեղը գտնելով՝ նոցա նուիրական արիւնը հողով ծածկեցին և քարէ արձան կանգնեցին 'ի նշան նահատակութեանն :

Մեր նախկին եկեղեցւոյ պատմութեան բեկորներն որ մեր ձեռքը հասած են , ըստ մեծի մասին սահմանափակ նպատակ ունեցած են . նոքա վկայաբանութիւնք են , և անհատ քրիստոնէից նա-

հասակութեան և մահուան դէպքերն և եթ նկարագրելու պաշտօն ստանձնած են . և շատ անգամ ևս պատմական կարեւոր տեղեկութիւնները զանց կ'առնեն և հեղինակի բանաստեղծական աւիւնին տեղի կըտան . կըգրեն և իւրեանց նահատակ հերոսներուն և նոցա հակառակորդաց խօսել կըտան զոր ինչ ինքեանք վկայաբանութեան հեղինակք կըբաղձային որ խօսուած լինէր : Այնպէս որ երկարապատում աւելորդաբանութեանց մէջէն պէտք է փնտռել ու զտել պարզ պատմական եղբուրութիւնն , և չյիշուածներն ևս համեմատութեամբ մակարեբել : Տարակոյս չկայ որ ինչպէս Սուրբ Ոսկեանք նոյնպէս և Սուրբ Սուքիասանք միմիայն իւրեանց անձին և հոգւոյ փրկութեամբը չէին կարող շատանալ : Տարակոյս չկայ որ նոքա յաճախ իւրեանց օթեւաններէն կ'ելնէին Հայոց երկրի այլ և այլ գաւառները կըճամբորդէին և ըստ տէրունական պատուիրանին աշակերտէին զամենայն հեթանոսս : Սուրբ Սուքիասանք իւրեանց մարտիրոսութեան ժամանակ արտասանած աղօթքին մէջ մասնաւոր կերպիւ Հայոց երկրի և ժողովրդեան հոգևոր փրկութիւնն աչքի առաջ ունին . « Լուր տէր աղօթից մերոց և գթա առ երկիրս Հայոց աշխարհիս , զի դարձցին յերկրպագութիւն և 'ի փառաբանութիւն Երրորդութեանդ , զի քս են արարածք , և քեզ վայելէ երկրպագութիւն և փառք յամենայն արարածոց , տէր Աստուած մեր » : Այսպիսի աղօթք արտասանողն կարելի չէ որ ինքնին անտարբեր մնայ և անձամբ չաշխատի իւր ազգի լուսաւորութեան համար : Եթէ Ս. Ոսկեանց և Սուքիասանց պէս անհատ քրիստոնեայք Ս. Աւետարանն ժողովրդեան մէջ լուրութեամբ և գաղտնի չտարածէին , մեզ անհասկանալի պիտի լինէր օտարազգի որպէս և հայ պատմչաց պատա-

հական ակնարկութիւնք . օրինակի համար երրորդ դարու մէջ Փերմելիանոսի աւանդածն առ Խորենացոյն , թէ և բազումք 'ի քրիստոնէից նահատակեցան 'ի Հայս , կամ Արարատեան վկայից պատմութիւնն , ըստ որում երկրորդ դարու սկիզբներն տասն հազար քրիստոնեայք Արարատեան լեռան վերայ այլ և այլ խոշտանգանօք և խաչուելով՝ մարտիրոսացան , թող որ ինչպէս յառաջագոյն ակնարկուեցաւ , Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութեան և Հայոց բոլորական դարձի հրաշալի յաջողութիւնն ըստ մեծի մասին արդիւնք էր այսպիսի անհատական գործունէութեան :

Ընթերցողաց հետաքննութեան համար կըզնենք աստ Սրբոց Սուքիասանց տասն և եօթն վկայից անուններն զոր մեր վկայաբանն աւանդած է : Անուններն ըստ մեծի մասին յունական հնչում և կերպարանք ունին , որովհետև մեր վկայաբանն ևս յունարէն գրուած Տատիանոսի պատմութենէն քաղած է . և յոյնք ամեն ազգերէ աւելի սովորութիւն ունէին օտար անուններ յունացնելու , կամ բոլորովին թարգմանելով , ինչպէս Ոսկի կամ Աւրելիոս ի Խոխիսի , կամ յունական մասնիկներ կցելով , ձայնաւորներն և դժուարահնչիւն բաղաձայնները փոխելով :

Ահա երանելեացս անուններն սոքա են . — Աիւփիաս , Աիւսիփանոս , Պաղոսէս , Կոդրասոս , Իդիփսիփոս , Մեմնաս , Փաւկաս , Սեղիս , Դուեսիոս , Ադրանիոս , Զոսիմոս , Բեկսոս , Թաղիսաս , Յորդանէս , Անասաս , Թէոդորոս , Յակոբոս , Թէոդոսիոս :

ՔԱՌԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ Ի ՎԵՐԱՅ
ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂԱՑ

ԱՊՐԱՀՈՒԹԻՒՆ

(Խօսեցեալ յազգային եկեղեցոց Հայոց Մանչեսթրի ի հիկզե-
րսոյ Կառնալի Մեծի Պահոց 1900 .)

« Ուր գանձք ձեր են , անդ եւ սիրտք ձեր եղիցին » :— Մատթ . Զ . 21 .

Հաւատացեալ Եղբարք ի Քրիստոս .

Հինգերորդ մահացու մեղքն է Ազանութիւնն :

Ազանութիւնն է՝ երկրաւոր բարիքներ ձեռք բերելու ապօրինի ցանկութիւնն : Երկրաւոր բարիքներ տեսակ տեսակ են , եւ այդ ամենը ձեռք բերելու համար , ինչպէս օրինաւոր , նոյնպէս եւ ապօրինի , ցանկութիւն կայ : Թագաւորք կը ցանկան իւրեանց պետութեան սահմաններն ընդարձակել , նորանոր երկիրներու տիրել , հարստանալ ու ճոխանալ , եւ իւրեանց համար զէնք ու զօրք ու պատերազմիկ նաւեր բազմացնել : Մեծ վաճառականն ու կալուածատէրն իւր հարստութիւն եւ կալուածներ օրըստօրէ մեծցնել ու տարածել կը ձգտի . արհեստաւորն ու վարձաւորն իւր տունն ու անեղէն , իւր զգեստն եւ արգ ու զարդն բարւոքելու , շատցնելու , եւ ճոխացնելու հետամուտ է . եւ մինչեւ իսկ ամենէն յետնեալ ազգատն իւր նիւթական վիճակն բարւոքելու , երկրիս բարիքներ ձեռք բերելու կ'աշխատի , լինին այդ բարիքներ մի կարկատուն բաճկոն , մի զոյգ մաշուած կօշիկներ կամ մի քանի փէնիի արժողութեամբ զարդարանք : Ամեն բանական հողեղէն արարած կը ցանկայ երկրիս բարիքներուն , որոց , ըստ մեծի մասին , պէտք ունի : Քանի որ այդ ցանկութիւնն օրինաւորութեան սահմանի մէջ է , քանակութիւնը կամ տեսակը նշանակութիւն չունի . այդ մեղք չէ , ազանութիւնն չէ : Այլ երբ օրինաւորութեան սահմանէն կ'անցնի , եւ երբ մի մարդ տասնաբանեայ պատուիրանաց վերջնոյն հակառակ կը դործէ , եւ կ'աշխատի իւր ընկերի ունեցածը ձեռք բերել ապօրինի միջոցաւ , կամ իւր ընկերին ուղղակի եւ անուղղակի վնաս հասցնե-

լով օգտուել, այդ կըլինի ազանութիւն: Այնպէս որ, ազանութիւնն առանց բացատրութեան ամեն դասակարգի մէջ կրնայ գտնուիլ. մեծ ու պզտիկ, հարուստ ու աղքատ, այր ու կին, ամենքն եւս կրնան ազան լինիլ: Յանկացած դոյքի ոչ արժէքն եւ ոչ քանակութիւնն է որ կըկազմէ ազանութիւն, այլ պարզապէս այն սպօրինի ոգին որով մի մարդ երկրաւոր հարստութիւնը գերադասելով այլ ամենայն հոգեւոր բարեաց, ամենայն ինչ, ամեն ջանք եւ աշխատութիւն, ամեն բարի զգացում եւ մարդասիրական նկատում, ամեն հոգեւոր եւ բարոյական սկզբունք կըզոհէ եւ միշտ զոհելու պատրաստ է՝ այդ ցանկացեալ բարիքները ձեռք բերելու համար. վասն զի, ըստ տէրունական բանին, « ուր գանձք ձեր են, անդ եւ սիրաք ձեր եղիցին ». եւ ազան մարդն երկրիս շօշափելի եւ տեսանելի բարիքներէն դուրս, յորոցմէ առ առաւելն մի քանի կանգուն կտաւ կրնայ սանիլ իւր հետ 'ի գերեզման, որ եւ է ուրիշ՝ աւելի մնայուն, աւելի հաստատուն եւ վայելուչ դանձ չի ձանաչեր. ազան մարդու համար, հարստութիւնն ոչ թէ իւր գիտցած ամեմէն մեծ գանձն է, այլ առաւել եւս՝ նորս պաշտելի շատուածն է, կուռքն է, որում անդադար, գիշեր ցերեկ, պաշտօն կըմատուցանէ, կըծառայէ:

Մեր Փրկիչ շատ պարզ կերպիւ կ'որոշէ օրինաւոր ցանկութիւնն ընչից՝ ազանութեան մոլութենէն: Մէկ անգամ կ'ասէ, « Ոչ կարէք երկուց տերանց ծառայել՝ Աստուծոյ եւ մամոնայի », — Մամոնայ երկրաւոր հարստութիւն ասել է, — եւ ուրիշ առթիւ կ'ասէ՝ « Արարէք ձեզ բարեկամս 'ի մամոնայէ անիրաւութեան »: Միով բանիւ Քրիստոս կըյորդորէ զմեզ որ երկրաւոր հարստութիւնը մեզ 'ի բարին ծառայեցնենք, ոչ թէ նմա պաշտելու եւ երկրպագելու չափ ծառայենք, մտածելով որ մեր Տէրն ու Արարիչն Աստուած է, որում ծառայելու կոչուած եմք, եւ երկրաւոր բարիքներ այն միջոցներն են որով ընդ նախախնամութեամբ Աստուծոյ կ'ապրինք այս աշխարհի վերայ եւ մեր պարտքը կըկատարեմք առ Աստուած, առ մեր անձն եւ առ մեր ընկերն: Տարակոյս չկայ որ ազանութիւնը կըսկսի նախ այն օրինաւոր հոգածութենէն զոր ամեն բարելիզմ անձն պարտի ունենալ՝ իւր եւ իւրայնոց ապրուստն ապահովելու եւ բարւոքելու, եւ մասամբ եւս ապագայի ծերութեան եւ հիւանդութեան համար պաշար պատրաս-

տելու : Բայց մեղանշական կերպարան կ'առնու այդ բարի նպատակ, եւ աղահուժիւն կը դառնայ, երբ մարդ իւր անձնական պէտքերն կամ ապագայն պատճառ բռնելով՝ իւր ընկերին իւր թական անձկութեան հանգէպ բոլորովին անզգայ եւ քարասիրտ կը մնայ, հաշուական կանոնաւորութեան պատրուակաւ բոլոր մարդասիրական եւ քաղաքավարական զգացումներ ստնակոխ անելով մի քանի փէնի կամ մի քանի շիլինգ իւր տկար եւ անօգնական ընկերէն խորամանկութեամբ շորթել կամ անիրաւութեամբ զրկել, գիտնալով հանդերձ որ խեղճ է եւ թշուառ, վաշխ վաշխի վերայ բարգիւ եւ աւելի եւս թշուառացնել կը ջնանայ : Ազահութեան նշաններ են երբ հարուստն իրեն գիմով արժանաւոր աղքատին չօգնելու համար, « ինչու՞ աղքատ մնացեր ես, քու մեղքդ է, չես աշխատիր, ծոյլ ես », եւ այլ այսպիսի խօսքերով կը պատասխանէ, եւ խեղճի թշուառութիւնն առաւել եւս կը սասկացնէ : Ազահ է այն մարդ որ իւր ամբողջ ջանք ու աշխատութիւն ու ժամանակ ու մտածում միայն հարստանալու կը նուիրէ. իւր անձն իսկ կը զրկէ այն օրինաւոր եւ բնական հաճոյքներէն եւ վայելքներէն որով զմեզ Աստուած շրջապատեր է. ժամանակի կորուստ եւ ծուլութիւն կը համարի որ եւ է ուրիշ բանով պարապիլն որ ուղղակի ստակ շահելու չի առաջնորդեր : Գեղեցիկ գիրք մը կարգալ որոյ մէջ ստակ շահելու խնդիր չկայ, նախնեաց պատմութիւնը կարգալ իմանալու համար թէ ի՞նչ տեսակ ազգեր ու մարդիկ կային 'ի հնուամի, ի՞նչ էր նոցա վարք ու բարք ու քաղաքակրթութեան աստիճան, Աստուծոյ եւ բնութեան հրաշալիքները զննել, երկրիս բոյսերն ու ծաղիկներն ուսումնասիրել, անկել ու ցանել եւ նոցա կենաց այլ եւ այլ աստիճանները դիտել, երկրիս բնական տեսարանները վայելել, ծով ու ցամաք, սար ու ձոր, գետ ու դաշտ, եւ Աստուծոյ այն բոլոր անկենդան եւ կիսակենդան ստեղծուածներն, զորս Սաղմոսերգուն կը հրաւիրէ ասելով՝ « Օրհնեցէք ամենայն գործք տեսուն զտէր, օրհնեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան » . կամ մարդկային հանճարոյն վերայ հիանալ, գեղեցիկ արուեստներն հետաքրքրութեամբ դիտել եւ վայելել, նշանաւոր նկարիչներու ձեռագործներ, երեւելի ձեռակերտ արձաններ, մեքենայներ եւ այլ եւ այլ գիւտեր ու հնարներ դիտել ու զննել, հիանալ ու սիրել. կամ շոյն իսկ առողջութեան համար անհրաժեշտ համարուած

մարմնական մարզանքն , շրջագայութիւնն , օդափոխութիւնն , պարկեշտ զբօսանք եւ այլն ըստ աստիճանի եւ յարմարութեան : Այս ամենը ազան մարդոյն համար ժամանակի կորուստ է , ծուլութիւն է , անխելքութիւն է , վասն զի « ատոնց ոչ մէկը փարս չընէր » :

Եթէ նոյն իսկ մարմնաւոր եւ երկրաւոր հաճոյքներ որ նիւթական արգիւնք չեն բերեր՝ այսքան քիչ հրապոյր ունին ազան մարդոյն համար , բարոյական կամ կրօնական եւ երկնային բարիքներ ին՞չ արժէք կարեն ունենալ նորա համար . մեղք չէ՞ որ գործը ձգած կիրակի պահէ , եկեղեցի երթայ կամ իւր չհասկացած կամ իւր զգացումներէն շատ հեռու բաներու ետեւէն իյնայ , մինչդեռ նիւթական շահը , ստակը ձեռքէն կը փախչի :

Ազան մարդոյ կիրքեր միայն այս չափաւոր աստիճանին մէջ չեն մնար : Հետզհետէ նորա խիղճը կը քարանայ , Աստուծոյ երկիւղն իւր սրտէն փարատելով՝ մարդկային ամօթն եւս իւր երեսէն՝ ի բաց կը դնէ , բոլորովին մէկ կողմ կը ձգէ ազնութեան եւ պատուոյ այն զգացումներ զորս ամեն մարդ , հարուստ ու աղքատ , կը բաղձայ ունենալ , եւ այդ յատկութիւններով ճանչցուիլ ու յարգուիլ կը սիրէ , միշտ « Մեծապատիւ Էֆէնտի » , « Ազնուամեծար Ազա » կոչուիլ կ'ուզէ , բայց անպատիւ եւ անարդ միջոցներ , խոտամազանցութիւն , ստախօտութիւն , յայտնի կամ գաղտնի խարդախութիւն , երգնազանցութիւն . այս ամենը եւ դեռ աւելին ազան մարդոյն ամենեւին խղճահարութիւն չեն պատճառեր :

Նոր կտակարանի մէջ յիշուած ամենէն մեծ մեղքն ազանութեան արգիւնք էր : Յուդաս Իսկարիօլտացին իւր Տէրն ու Վարդապետն երեսուն արծաթով մատնեց : Բայց մի՞թէ կը կարծէք որ Յուդաս ազանութեան այդ ծայրայեղ աստիճանին յանկարծակի՞ կամ մէ՞կ աւուր մէջ հասաւ . կամ առանց երկար նախապատրաստութեան եւ ճանապարհն հարթելու կրցաւ սատանայ Յուդայի միտքը դարձնել ընդդէմ իւր բարերարին : Ո՞չ երբէք : Յուդա կասարեց այն ամբողջ շրջանն սրոյ մէջէն անցաւ մեր այս աւուր նկարագրեալ ազան մարդն : Յուդա Իսկարիօլտացի Քրիստոսի առաքելոց խումբի գանձապահն ու ծախսարարն էր . այսինքն , ժողովրդեան կողմէ Քրիստոսին կամ իւր առաքելոց մատուցեալ նուէրները կ'ընդունէր եւ կը ծախսէր՝

մասամբ տէրունական խումբի մարմնաւոր պիտոյից համար, եւ մասամբ աղքատաց եւ կարօտելոց տալու համար: Տարակոյս չկայ որ երբ Յուդաս առաքեալ ընտրուեցաւ, բարի եւ արժանաւոր եւ անձնուէր մարդ մի էր, եթէ ոչ Յիսուս զայն չէր կոչեր յաշակերտութիւն եւ յառաքելութիւն. ոչ եւս ինքն յանձնառու կըլլինէր աշխարհքէ հրաժարիլ եւ երկնակենցաղ ճանապարհաւ հետեւիլ Քրիստոսի, եթէ ինքն 'ի սկզբան աշխարհուրաց ոմն չլինէր, քանզի գանձապետութեան պաշտօնն ստանալու նպատակաւ չէր որ Յիսուսի աշակերտ եղաւ: Բայց հետզհետէ մինչ ստակներն իւր ձեռքէն կ'անցնէին, թերեւս փորձուեցաւ նախ մէկ փոքրիկ մասն միայն իւրեան սեփականել, ինչպէս աւետարանիչն եւս (Յովհ. Բ. 15) կ'ախարկէ. վասն զի այն նախնական ժամանակներ եւ այլ սրբազան խումբի մէջ ճիշդ եւ մանրամասն հաշիւ տալու եւ առնելու սովորութիւնն չկար: Յուդայի ազահութիւնն օրըստօրէ շատացաւ, եւ գողութիւնն եւս հաւանօրէն ընդարձակեցաւ եւ մեծացաւ, մինչեւ այն սոսկալի աստիճանին հասաւ որ սրբազան խումբին ծառայելու սահմանեալ դրամն աւելի սիբեց քան զերկնային Վարդապետն իւր, զոր վատութեամբ մատնեց 'ի ձեռս անօրինաց՝ երեսուն արծաթ եւս շահելու համար: Բայց շատ ուշ տեսաւ եւ զգաց տարբերութիւնն. իւր յաւիտենական վարդապետէն զրկուեցաւ, եւ իւր ազահութեան այսքանամեայ արդիւնք առանց ճաշակելու՝ անձնասպան եղաւ:

Այսպէս ուրեմն, հաւատացեալ ժողովուրդ, տեսնելով ազահութեան սոսկալի եւ չարաչար արդիւնք եւ հետեւանք, Իսկարիովտացւոյ ողորմելի օրինակն մեզ խրատ ու դաս շինենք. վստահ լինինք որ եթէ մեր սիրտերի մէջ ազահութեան ամենսփոքր նշոյլն անդամ կըկրենք, անտարակոյս Յուդայի շաւղին մէջ կըգանուիմք, եւ որքան հեռու կըկարծեմք զմեզ Յուդայի մատնութեան եւ անձնասպանութեան մեղքէն, դարձեալ մեր ճանապարհն անդր կըտանի, եւ կրնայ մի օր նոյն եղկելի վիճակին հասցնել զմեզ:

Ազահութեան զեղն է՝ սրախ գոհունակութիւն. գոհ լինիլ մեր երկրաւոր վիճակէն: Եթէ աղքատ եմք, մեր աղքատութեան սփոփանքներով միսիթարուիմք, եւ մտաբերենք որ հարուստներ եւս մեծամեծ զժուարութիւններ

եւ նեղութիւններ ունին յորոցմէ աղքատներ աղաա են :
 Ի զուր կրքարբալէ աղքատն . « Ա՛խ , ես այս ինչ մարդոյ
 հարստութիւնն ունենայի , տես ինչե՛ր կ'անէի » : Դու
 նախ գործէ քո աղքատ վիճակիդ մէջ ինչ որ կարես առ-
 նել ՚ի փառս Աստուծոյ եւ յօգուտ ընկերին , որպէս զի
 հասկանաս թէ ինչե՛ր կարես առնել երբ հարստանաս : Եթէ
 մինչեւ իսկ ամենաթշուառ աղքատն ես , դարձեալ կարես
 քո վիճակի համեմատ մի լուսնայ ճարել , նիւթապէս կամ
 բարոյապէս , Աստուծոյ գանձանակը ձգելու . եւ եթէ այդ-
 քանն եւս այլ եւ այլ պատրուակներով կըզլանաս , ու-
 բեմն ագահ ես քո աղքատութեամբն հանդերձ :

Տէրն մեր Յիսուս Քրիստոս , որ քառասնօրեայ փորձու-
 թեամբ յանապատի , մեզ համար եւ յօրինակ մեզ , մեղաց
 եւ սատանայի չար թելադրութեանց դէմ մաքառեցաւ ,
 տացէ մեզ շնորհ՝ փախչիլ եւ հեռանալ այս մահացու մեղ-
 քէն , եւ նիւթական գոյից իրական արժէքն լաւ ըմբռնե-
 լով հանդերձ , զայնս արդար ու քրիստոնէական ոգով
 ձեռք բերելով ու գործ ածելով հանդերձ , զգուշութեամբ
 խոյս տամք ընչասիրութեան ապօրինի բաղձանքէն , եւ
 բնաւ չմոռանամք տէրունական խրատ թէ՛ « Ուր գանձք
 ձեր են , անդ եւ սիրտք ձեր եղիցին » : Ամէն :

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Չ Ո Ւ Ն Ի Ն Ք

Ազատօրէն քարգլանեաց 'ի Գաղղիերենէ

ԱՐԺ. Տ. ՍԵՐՈՎԲԷ Վ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

Ազնիւ բարեկամներ .

Հարցուցէք պատճառը՝ իրենց բարեպաշտական պարտաւորութեանց մէջ թերացողներուն . անոնք առհասարակ հարիւրին իննսուըն ձեզ պիտի պատասխանեն . — «է՛հ, ի՛նչ անենք, զաւակներու տէր ենք, ապրուստի պէտք ունինք, օրն 'ի բուն, շաբաթն ամբողջ աշխատելով, յողներով հանդերձ՝ չենք կարող մեր ընտանեաց օրապահիկը հանել . բարեպաշտական պարտաւորութիւնները բարեկեցիկ մարդիկներու համար են, որոնք առանց աշխատելու ալ կրնան ապրիլ :

Զարմանալի բան, ասկէ ալ աւելի կեղծ պատճառաբանութիւն, ասկէ ալ աւելի քրիստոնէութեան հոգւոյն հակառակ բան կրնա՞յ ըլլալ : Կրօնք եւ բարեպաշտութիւն ամեն մարդու համար ալ անհրաժեշտ են եւ օգտակար . եւ եթէ երբէք կարելի լինի տարբերութիւն մը դնել մարդկանց միջեւ, անտարակոյս խեղճերն ու պղտիկներ ալ աւելի պէտք ունին կրօնի միսիթարութեան, քան թէ մեծամեծներ եւ հարուստներ : Սակայն մտածման եւ ըմբռնումի այս սխալ դրութիւնը դժբաղդաբար շատ ընդհանրացած է արհեստաւոր դասակարգին մէջ (մանաւանդ յեւրոպայ), ինչ որ անշուշտ—կ'ենթադրուի—տղիտութեան արդիւնք է պարզապէս : Ասոնք կրօնի մասին անհետեւ զաղափար մը ունին . կըկարծեն թէ բարեպաշտութիւնը մի միայն արտաքին եւ յաճախակի կրկնուած ձեւակերպութեանց մէջ կըկայանայ : Եւ ամենօրեայ աշխատութիւնը, որ անհրաժեշտ է եւ անխուսափելի արհեստաւորին իւր օրապահիկը հայթայթելու համար, յայտնի բան է որ արդեւք կը լինի այսպիսի ձեւակերպութեանց գործադրութեան : Ուրեմն խնդիրը լուծուած վերջացած կըհամարին՝ միամտաբար մեր առջեւ դնելով սա սովորական խօսքը—«ժամանակ չունինք» :

Բայց, խնդրեմ, ըսէք ինձի, ազնիւ ընթերցողներս, ո՞րքան ժամանակ պէտք է ձեզ՝ զԱստուած սիրելու համար :

Ո՞րքան ժամանակ պէտք է օրուան մը մէջ երբեմն մտամփոփ խորհելու Իւր բարերարութեանց վրայ, խնդրելու իրմէն, որ զմեզ օրհնէ. որ բարեյաջողութիւն շնորհէ մեր գործառնութեանց, որ երկնից արքայութեան ժառանգորդ ընէ զմեզ ներկայ դառնաղէտ կեանքի յոգնութիւններէն եւ տառապանքներէն յետոյ :

Ո՞րքան ժամանակ պէտք է երգում չընելու, մեր հայրը, մեր մայրը, մեր մեծերը յարգելու, չըգինովնալու, մեր թշնամեաց ներելու, չարի փոխարէն չար չը գործելու եւ ուրիշներու պակասութեանց համբերելու համար :

Ո՞րքան ժամանակ պէտք է ողջախոհ եւ մաքուր ըլլալու, վաս խորհուրդները մերժելու, չար խօսակցութիւններէ զգուշանալու, այս կամ այն վատաբարոյ ընկերէն հեռու կենալու համար, որ կրնար զմեզ խորասուզել մոլութեանց ովկիանոսներուն մէջ :

Միթէ չա՞տ ժամանակի կրկարօտինք մեր ունէ մի յիմարական եւ անխոհեմ արարքին վրայ զղջալու համար : Աւելին ըսեմ, մեր առաւօտեայ եւ երեկոյեան աղօթքը եւ պաղատանքն առ Աստուած մատուցանելու համար միթէ չա՞տ ժամանակի կը կարօտինք : Տասն վայրկենի, առ առաւելն տասնեւհինգ վայրկենի մէջ կրնանք կատարելապէս գոհացում տալ մեր այս ամենամեծ պարտաւորութեան. — եւ ո՞ր բազմազբազ մարդն է այն, որ 'ի սկզբան կամ 'ի վախճան աւուր չկարողանայ քանի մը վայրկեաններ զօհել իւր բարեպաշտական պարտաւորութեանց կատարման համար, երբ 'ի սրտէ ուզէ զայն : — Բայց—պիտի ըսէք, գիտեմ—կրօնքի պահանջները խիստ չատ են. կիրակի եւ տօն օրեր պէտք է եկեղեցի երթալ, պէտք է անպատճառ Ս. Պատարագի ներկայ գտնուիլ, պէտք է խոստովանիլ, պէտք է հաղորդուիլ եւ այլն, եւ այս ամենը ժամանակի կրկարօտի. բայց մեք ժամանակ չունինք : — Շատ լաւ. բայց խնդրեմ, ուրիշներ ի՞նչպէս կրկարգադրեն իրենց գործերը. ուրիշներ կ'ըսեմ, որոնք գուցէ ձեզի չափ եւ ձեզմէ ալ աւելի զբաղած իրենց օրապահիկը շահելու, բայց եւ այնպէս երբէք չ'են թերանար իրենց բարեպաշտական պարտաւորութեանց մէջ : Կըճանչնամ այնպիսիներ արհեստաւոր դասակարգէն, որոնք գոնէ ամիսը մի անգամ կըխոստովանին եւ Ս. Հաղորդութիւն կ'առնեն : Ասոնք ի՞նչպէս ժամանակ կըգտնան իրենց պարտաւորութիւնները կատարելու համար : — Ինչ որ ա-

նոնք կ'ընեն, դուք ալ կրնաք ընել . ուրիմն կամքն է որ կըտիրէ ձեր քով եւ ոչ երբէք ժամանակը :

Եթէ ինձ հարցանէք պատճառը ձեր ժամանակ չ'կրնալ գտնալուն եւ անոնց գտնալուն . ես պիտի ըսեմ թէ՛ զո՞ք կրօնական բաներու կարեւորութիւն տալ չէք ուզեր , ձեզի համար մարմինը աւելի կարեւորութիւն ունի քան թէ հոգին . մինչդեռ անոնք ամէն բանէ առաջ հոգեւորը կը փնտռեն : Ըսել չեմ ուզեր թէ անոնք իրենց մարմինը , իրենց ընտանիքը երեսի վրայ կըթողուն , — ո՛չ—այլ այն կ'ուզեմ հասկցնել թէ անոնք հոգեւորին եւ մարմնաւորին մէջ եղած տարբերութիւնը շատ լաւ ըմբռնած են եւ ամեն բան կըկարգադրեն հետեւելով ողջմտութեան եւ ճշմարտութեան կանոնաց :

Ի՞նչ պիտի ըսէիք եթէ ձեր սէրը կամ մեծաւորը ձեզ ժամանակ չի տար կերակուր ուտելու : Ի՛հ , աշխարհք տակն ու վրայ կ'ընէիք եւ կըպոռայիք . «առե՛ն բանե՛ն առաջ մեզի կերակուր պէտք է» : Օ՛ն ուրիմն , միեւնոյն բանը ամենայն իրաւամբ եւ ես ձեզ կ'ուղղեմ . — Ամէն գործէն առաջ , ձեր մարմնաւոր սնունդէն ալ առաջ , ամէն ճիգ թափեցէք , ամեն ջանք ՚ի գործ դրէք , որ ձեր հոգին չի կորսնցնէք . ձեր հոգին կ'ըսեմ , որ ձեր անձին ամենէն աղնիւ մասն է , ձեր հոգին , որ զձեզ լնարդ կ'ընէ , վասն զի մարմնով մ'իք պարպապէս անասուն ենք , հոգևով միայն մարդ կըլլանք եւ կըտարբերինք անասուններէն :

Բարեպաշտութիւնն է որ ձեր հոգևոյն կեանք կուտայ , միաւորելով զայն ընդ Աստուծոյ եւ դուք տակաւին կը պնդէք թէ ժամանակ չունիք ձեր բարեպաշտական պարտաւորութիւնները կատարելու : Ո՛չ , եղբա՛րք իմ , գտէ՛ք այդ ժամանակը , գնեցէ՛ք այդ կարեւոր ժամանակը , հոգ չէ որքան ալ սուղ ըլլայ ձեզի համար : — Աշխարհի վրայ ոչ ոք իրաւունք ունի զձեզ զրկելու այդ թանկ ժամանակէն . վասնզի աշխարհի վրայ ոչ ոք իրաւունք ունի ձեր կորստեան պատճառ ըլլալու , ոչ ձեր սէրը , ոչ ձեր մեծաւորները , ոչ ձեր հայրը՞ ոչ ձեր մայրը եւ ոչ ալ դուք . — առանց բացառութեան՝ ոչ ոք :

Արարածներէն եւ ոչ մէկը կարող է արգելք ըլլալ ձեզ . երբ դուք ոգի ՚ի բռին կ'աշխատիք ձեր փրկութեան գործոյն համար : Հակառակ պարագային՝ եթէ որեւէ մէկը փորձէ հակառակիլ ձեր նուիրական եւ սրբազան պարտաւորութեանց կատարման , այն ժամանակ դուք պէտք է հե-

տեւիք քրիստոնէական այս մեծ պատուիրանին—«Ամեն բան կորսնցնել՝ զԱստուած շահելու համար» :

—Բայց ինչ անկնք, կ'ըսեն ոմանք, մեր կացութիւնը չնկերբ, որ մեր փրկութեան գործովը պարապինք...

—Իրա՞ւ կ'ըսէք—չատ լաւ, իմ պատասխանս ալ լսեցէք եւ լաւ մը խորհրդածեցէք անոր վրայ, եւ եթէ տակաւին պնդէք ձեր ըսածին վրայ, այն ատեն պիտի ըսեմ թէ՛ հարկ է ձեր վիճակը, դրութիւնը կամ կացութիւնը փոխէք՝ եւ այնպիսի վիճակի մը ենթարկուիք, որ դիւրութիւն ունենաք աստուածամերձ եւ աստուածահաճոյ ընթացք մը ունենալու. — «Զինչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհ ամենայն շահեսցի եւ զանձն իւր տուժիցէ» :

Կանք որ, ո՞վ կրնայ պնդել թէ որեւէ վիճակի մէջ մէկը չէ կարող քրիստոնէաբար եւ բարեպաշտութեամբ ապրիլ: Ես չեմ հասկնար թէ՛ այն ի՞նչպիսի վիճակ կամ կացութիւն պիտի ունենայ մարդս, որ արգիլուի երբեմն Աստուծոյ վրայ մտածելէ, առտու երեկոյ աղօթելէ, օրը գոնէ կէս ժամ Ս. Գիրք կամ ուրիշ բարեպաշտական կամ բարոյական շինիչ եւ հրահանգիչ գրքեր կարդալէ ու խորհրդածելէ: Սակայն դուք—ներեցէք ինձ ըսել—ամեն վիճակի մէջ ժամանակ կը գտնաք Աստուծոյ կամաց եւ ձեր խղճի թելադրութեանց հակառակ գործեր ընելու, անհամեստ թատրոններ եւ զրօսավայրեր յաճախելու. — սակայն այն ժամանակը, որ դուք այսպէս ունայն տեղ կ'անցընէք՝ ՚ի վնաս ձեր պատուոյն, ձեր առողջութեան եւ ձեր քսակին, հարիւր անգամ պիտի բաւէր ձեր քրիստոնէական, բարեպաշտական պարտաւորութեանց անթերի կատարման, եթէ զայն ՚ի բարին գործածելու կերպը գիտնայիք միայն... —Բայց դուք նորէն կը պնդէք թէ ժամանակ չ'ունիք:

Իմ մասիս, ես երբէք չեմ կարող երեւակայել այնպիսի վիճակ մը, յորում մի գործաւոր կամ մի արհեստաւոր չի կրնայ, երեկոյ մը իւր գործը աւարտելէ յետոյ, մանաւանդ երբ մեծ տօներ եւ տաղաւարներ մօտենան, իւր խոստովանահայրը գտնալ, իւր մեղաց թողութեան հետ՝ ապագային լաւագոյն վարք ու ընթացք ունենալու համար խորհուրդներ եւ քաջալերութիւններ ստանալ: Իւր մէջ բարեպաշտական ոգի կրող եւ հոգեւորական զգացումներ սնուցանող քրիստոնէայ մը ի՞նչպէս կարելի է որ գէթ կիրակիէ կիրակի Ս. Պատարագի շնորհաց արժանանալու

համար ժամանակ չի գտնայ : Խղճի մտօք եւ աւագ աչօք դիտեցէ՛ք եւ պիտի տեսնաք ու պիտի համոզուիք թէ՛ անոնք իրենց ուզածը ընելու համար շատ լաւ ժամանակ կը գտնան ամէն վիճակի մէջ, բայց կրնա՞ն պէտք է :

Ուրեմն ալ մի՛ ըսէք թէ՛ ձեր բարեպաշտական պարտաւորութիւնները կատարելու համար ժամանակ չ'ունիք. — հաւատացէ՛ք, դուք զձեզ կըխաբէք : Կարող էք ըսել թէ՛ ուզածնիդ չափ ժամանակ, ուզածնիդ չափ դիւրութիւն չունիք . այդ ուրիշ խնդիր է : Համոզուեցէ՛ք մի անգամ ընդ միշտ թէ՛ Աստուած ամեն բանէն առաջ մեր սրտին, մեր կամքին կը նայի, եւ ասանկ պարագաներուն մէջ ժամանակը խնդրական չէ :

Ով որ իւր «ժամանակ»ը խնայէ Աստուծոյ, Աստուած ալ իւր «յաւիտենականութիւն»ը պիտի խնայէ անոր :

Մաղթենք ուրեմն, որ Ամենաբարին Աստուած տայ մեզ, ամէնուս ալ չնորհք եւ իմաստութիւն, զօրութիւն եւ կարողութիւն 'ի բարին գործածելու մեր ժամանակը, մանաւանդ մեր ժամանակին ամենէն թանկագին մասը նուիրելու մեր աստուածպաշտական պարտաւորութեանց անթերի կատարման . ամէն :

'ի Յոպպե. Յուլիս 1900.

ԿՐՈՆԱԿԱՆ ԴԱՍԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ

[Սոյն վերնագրի ներքոյ դրուած փոքրիկ յօդուածներն նպատակ ունին քրիստոսի վարուց վերայ մի կարգ պարզ դասերի ծրագիրներ ներկայացնել յորոցմէ կրօնուսոյց կարեն օգտուիլ . աւելցնելով Երեւս ուրիշ ինչ որ իւրաքանչիւր պարագային յարմար երեւի : Ոչ ինչ նուազ օգտակար կարեն լինել նաեւ քարոզչաց, որք իբրեւ նախապատրաստութիւն սոյն կամ սոյնպիսի ծրագրաց վերայ Երեւս յօժարին իւրեանց քարոզներ դասաւորել :]

ԹՂՓԱՏՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Երբ Քրիստոս ութ օրական էր՝ թղփատուեցաւ :

Արդարեւ նա այսպիսի ծիսական արարողութեանց կարօտ չէր, քանզի բոլորովին անմեղ էր . բայց և այնպէս ուղեց համակերպիլ Մովսիսական օրինաց և այն բոլոր սովորութեանց որոց կ'ենթարկուէին սովորաբար եբրայեցի մանկունք :

Թղփատութիւնը կըկատարուէր ծննդեան ութերորդ օրն և խորհուրդ մի էր մարմնոյ չար ցանկութեանց հրաժարման : Աստուած տնօրինած էր զայն, և ամեն արու մանկան վերայ կըկատարուէր : Այս արարողութեան ենթարկուելով՝ մեր Փրկիչն ուղեց իւր

Աբրահամու սերունդէն լինելն հաստատել :

Թլփատուութիւնն նախ հաստատուեցաւ Աբրահամու ժամանակ , երբ Աստուած մարդոյ հետ դրած իւր դաշինն կամ ուխտն նորոգեց . զորմէ տես Ծննդ . ԺԷ 11 :

Թլփատուութիւնն այժմ այլևս խափանուած է : Իսկզբան հրեայ քրիստոնեայք կըկարծէին և կ'ակնկալէին որ հեթանոսութենէ դարձող քրիստոնեայք հրէից պէս թլփատուէին : Բայց Առաքելոց ժամանակ տեղի ունեցած անհամաձայնութիւն և վիճաբանութիւն 'ի մէջ հրեայ և հեթանոս քրիստոնէից և այդ առթիւ գումարուած առաքելական ժողովոյ վճիռն միանգամ ընդ միշտ քրիստոնեայներն ազատ կացոյց մովսիսական օրէնքէն : Տես Գործ . ԺԵ 23-29 :

Քրիստոսի թլփատութեան նկատմամբ երեք բան նկատելու է :

1. Նորա հնազանդութիւնն . —

(ա) Նորա մայրը գիտէր որ Քրիստոս էր իսկպէս որդի Աստուծոյ , ինչպէս աւետման միջոցին որոշակի յայտնուած էր նմա . Դուկ . Ա 35 : Եւ թէպէտ Աստուծոյ հետ հաշտուելու պէտք չունէր Որդին Աստուծոյ սակայն իբրև խոնարհութիւն և հնազանդութիւն Ս . կոյսն թլփատել տուաւ զնա :

(բ) Նա ինքն—թէպէտ և նորածին մանուկ—թլփատուելով ինքնզինքն ենթարկեց մարդոյ համար հաստատեալ օրինաց , որպէս զի մարդեղութիւն կատարեալ լինի : Կատարեալ հնազանդութիւնն էր մի մասն իւր փրկական պաշտօնի : Հռովմ . Ե . 10-19 :

ԽՐԱՏԱԿԱՆ . — Քրիստոսի օրինակն մեզ ցոյց կուտայ թէ որքան կարևոր է Աստուծոյ օրինաց կատարումն : Ս . Մկրտութիւնը թլփատութեան փոխարէն հաստատուած է : Ս . կուսի օրինակն մեզ խրատ լինելու է՝ մեր զաւակներ ժամանակին մկրտութեան բերելու : Մկրտութիւնն , նման թլփատութեան , Աստուծոյ և մեր միջև հաշտութեան և շնորհաց ուխտի խորհրդաւոր նշանն էր :

Բայց Մկրտութիւնն թլփատութենէ աւելի զօրութիւն և ազդեցութիւն ունի : Խորհուրդ մի է , շնորհաց միջոց մի է . այն միջոցն է որով Աստուած հաճեցաւ աղամայրին մեղօք կորուսեալ կեանքն նորոգել :

2. Նորա շարչարանքն . —

Թլփատութիւնն առաջին շարչարանքն էր զոր մեր փրկիչ կրեց : Ամեն ոք կոչուած է այս աշխարհում շարչարուելու , և Տեառն մերոյ Յիսուսի կեանքն մասնաւոր կերպիւ շարչարանաց կեանք էր :

Ս. Գիրք կ'ունուցանէ թէ—

- (1) Քրիստոս պէտք էր շարշարուէր . Ղուկ . ԻԳ 46 .
- (2) Նորա շարշարանքն մարդարէութեանց կատարուած էր . Գործ . Գ 18 .
- (3) Մեզ համար շարշարուեցաւ Պետր . Գ 1 .
- (4) Համբերութեամբ շարշարուեցաւ Ա. Պետր . Բ 23 .

ԽՐԱՏԱԿԱՆ .— Նոյնպէս և մեք պարտիմք համբերութեամբ և յօժարութեամբ տանիլ մեր վերայ դրուած խաչն , եթէ կ'ուզենք Քրիստոսի արժանաւոր հետևողներ լինել : Մեք չպիտի աւելի դիւրին և հանգիստ կեանք սպասենք քան զոր մեր Փրկիչն ունեցաւ : Ս. Գիրքը բացարձակապէս կը պատուիրէ մեզ յամենայն ժամ նեղութեանց և դժուարութեանց հանդիպելու պատրաստ լինիլ .—

- (1) Կերպարանակից լինել մահուան նորա փիլ . Գ 10 .
- (2) Հաղորդակից լինել Քրիստոսի շարշարանաց Ա. Պետր . Գ 13 .
- (3) Որով պիտի կարենամք կատարելութեան հասանիլ Ա. Պետր . Ե 10 .

3 . Նորա անունն .—

Սովորաբար թլփատութեան առթիւ մտնկան անունը կը քրուէր , որպէս այժմ առ մեզ մկրտութեան առթիւ : Ս. Յովհաննէս Մկրտիչ ևս իւր անունն ստացաւ թլփատուելու ժամանակ . Ղուկ . Ա 59-60 :

Քրիստոս ստացաւ Յիսուս անունը որ կը նշանակէ Փըրկիչ կամ փրկութիւն տեառն : (Ժննդ ժե 2) Ղուկ . Բ 21 : Քրիստոսի անունն մասին կը կարգամք 'ի Ս. Գրոց թէ

- (1) Յանուն նորա հեթանոսք յուսացին (Մատթ . ԺԲ 21 .
- (2) «Ձկեան» յաւիտենականս ընդունիցիք յանուն նորա» (Յովհ . Ի 31) :
- (3) Զոր ինչ ինդրիցէք 'ի Հօրէ Իմէ յանուն Իմ տացէ ձեզ) :

Փրկչի միւս անուններն են ՔՐԻՍՏՈՍ (այսինքն , օծեալ) . ԷՄՄԱՆՈՒԷԼ (Աստուած ընդ մեզ) . Սալի է 14 . Մատթ . Ա 53 . ՍԲԱՆՁԵԼԻ , Ես . Թ 6 :

- ԽՐԱՏԱԿԱՆ (1) Հնազանդիլ աստուածային օրինաց .
- (2) Նեղութիւն կրելու պատրաստ լինիլ , և յօժարութեամբ տանիլ 'ի սէր Քրիստոսի .
 - (3) ԶՔրիստոս իբրև մեր Փրկիչն ընդունել .
 - (4) Զգուշանալ մեր քրիստոնեայ անունը մեղօք չաղարատել :

ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ ՄԱՐԿՈՍԻ ԱԻՐԵԼԻՈՍԻ

ՀԱԽԱՔԵԱՅ ԱՐԺ. ՏԵՐ ԱԻԵՏԻՍ Կ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ:

(Շարունակութիւն, քես 128.)

ՄՈՂՈՒԹԻՒՆ

Ով որ մեծ մեծ կը խօսի, գործի մէջ ամենքէն վախկտան է:

Ունայնասէր մարդիկ ունայն յոյսերով կ'ապրին:

Ով որ անխելքներէն կը գովուի, խելացիներուն կասկածելի կ'ըլլայ. վասն զի անխելքները զանոնք կը սիրեն, որոնք որ մոլութիւններու սանձը կը թողուն:

ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Ագահութիւնը մեծ բռնաւոր մի է, զոր ոչ աշխարհիս ամօթը կրնայ նուաճել, ոչ մահուան երկիւղը կրնայ կասկել, ոչ ալ բանականութիւնն անոր հետ կը համաձայնի:

Ագահութիւնը որքան ճոխ հարուստներ շատցնէ, նախանձն ալ այնքան նախանձոտ դահիճներ կը հանէ անոնց դէմ:

ՏՂԱՅՔ

Տղայ ըսածը՝ ի՛նչ որ կը տեսնայ, ինչ որ կը լսէ, զայն կ'ընէ, մանաւանդ վարպետներուն վերայ տեսածն, ու անոնցմէ լսածը:

Տղայոց մոլութեան մէջ իյնալու մեծ պատճառը՝ ծնողաց անհոգութիւնն է:

Տղայոց գործած թերութիւնները տգիտութենէ յառաջ կուգան:

ՅԱՆԿԱԿԱՆ Ա.ԽՏ.

Չըլլայ որ ծերն իր ծերութեանը վստահի, եւ ոչ երիտասարդն՝ իր առաքինութեանը. քանի որ փայտը կրակի վրայէն չէ վերցած՝ կ'այրի. քանի որ մարմինը գերեզման չէ դրուած՝ ցանկութենէ ապատ չէ: Մեր զգայարանքները հոգւոյն կ'ազդարարեն, ու մեր հոգին ցանկութեան մայրն է. ցանկութիւնը մեր մանկութեան դահիճն է, մանկութիւնը մեր ծերութեան լրտեսն է, ծերութիւնը մահուան հսկող լրտեսն է, մահն ալ մեր կենաց վերջի օթեվանն է, յորմէ փախուստ տալն անհնարին է: Ախտաւոր սիրով կիրք յագեցնող հրճուանքի հետեւու-

Թիւնը՝ հաւատարի վատահամբաւութիւնն է :

Թէպէտ Թունաւորուած մարմին կը պատժուի հիւանդութեան ախտերով, ու շատ տարիներու շատ աշխատանքներով ու տառապանքներով ալ կը մաշի, սակայն ցանկութեան կայծը կը մնայ անոր մէջ : Ուրեմն ի՞նչ պէտք է մեր առաքինութեանց վրայ պարծենալ, ու մեր բնութիւնը ուրանալ : — Թունաւորուած սէրը՝ մարմինը գուրսէն առանց պատռելու՝ ներսի արիւնը կը ցամաքեցնէ ալիքներուն մէջ : Կիներու ետեւէ եղող մարդէն բարեգործութեան յոյս չկայ :

Մարմնական զգայարանքներուն որ հետեւինք, մեզմէ վար կ'ըլլանք. մեր հոգւոյն որ հետեւինք, մեզմէ վեր կ'ըլլանք : Վասն զի զգայականութիւնն զմեզ կրնայ անասուններէն վար ընել, իսկ բանականութիւնը՝ մարդիկներէն վեր :

Գեղեցկութիւնը պատանեաց համար ուրիշ բան չէ, բայց վարագոյր մըն է աչքերնուն առաջ, քար մը՝ ոտքերնին անոր զարնելու եւ ինկնալու համար. ձեռնակապ մը՝ գործքի հետ չըլլալու. դահիճ մը՝ իրենց սիրտը տանջելու, գող մըն է իրենց ժամանակին. վտանգ մը՝ իրենց կենացը. պատճառ մը՝ նախանձու, եւ պղծութեան գրգիռ :

ՄԱՀ

Գէշ մահը մարդուս բոլոր կեանքն երկբայելի կ'ընէ. իսկ աղէկ մահն՝ աղէկ կեանքը նայել չի տար : — Արթնցէ՛ք քիչ մը ձեր խոր քնէն, աչքերնիդ բացէ՛ք, քիչ մը բարեգործութիւն ըրէք, կամաց կամաց մահուան հետ իրաւախոհ եղի՛ք, քանի որ գեռ վրանիդ հասած չէ : — Մահը առանց մեր գուռը զարնելու՝ յանկարծ մեր վրայ պիտի յարձակի : — Ո՛հ, թէ ո՞րչափ անզգոյշ ենք մեր կեանքի մէջ, որ երբ կեանքերնիս լիննալու վրայ լինի, այն ատեն աչքերնիս դէպ 'ի մահը կը դարձնենք :

Աշխարհքն ու մարմինը մեզ հետ պատերազմելէ զատ՝ ուրիշ զբազմունք մը չունին. մենք ալ ամեն ատեն դիմադրելու ենք : Չարիքները մեր աչքի առաջն ունինք, ու չենք տեսներ. ձեռքերով կը շօշափենք, ու չենք զգար. ոտքերնուս տակն ունինք, ու չենք ճանչնար. մեր ականջներէն կը խօսին, ու մտիկ չենք ըներ. բարձր կ'ազդակեն, ու չենք իմանար : Յուրտ, ծարաւ, միայնութիւն, հալածանք, տառապանք, թշուառութիւններ, հիւանդութիւններ. ասոնք կեանք չեն կրնար կոչուիլ, այլ

մանաւանդ երկար կեանքի մահ կը համարուին:—Իրաւոր մահը խաղ մըն է, որուն մէջ եթէ զգաստ խաղացողներ ըլլան, քիչ վնաս կը կրին, ու շատ վաստակ կը շահին: Ո՛ր ընթացքով որ կեանքը կ'երթայ, նոյն ընթացքով մահն ալ կուգայ:—Ինչպէս որ կը ծնինք մեռնելու համար, նոյնպէս ալ կը մեռնինք ապրելու համար:—Պաղատասէր մարդկանց կեանքն ուրիշ բան չէ, բայց պանդխտութիւն մը քիչ ձանձրալի. իսկ խոռովասէր մարդուն՝ երկար մահ մը: Որոնք որ իրենց մէջ շատերը խաբեցին իրենց չար գործքերով՝ նոքա իրենց ունայն մըտածմունքներէն խաբուած պիտի գտնուին մահուան ատեն:—Եթէ մէկը հարցնելու ըլլայ ինծի, թէ մահն ինչ է, կ'ըսեմ՝ որ այս ողորմելի կեանքէն ազատուիլն է:—Մարմնոյ գեղեցկութիւնը թէ՛ շուտ՝ թէ ուշ, կը կորսուի գերեզմանին մէջ. բայց առաքինութիւն ու գիտութիւնը կ'անմահացնեն մարդուն յիշատակը:

ՄՈՒՆԻՍԻՒՆՔ ԱՏԵԼԻ ԵՒ ՍԻՐԵԼԻ.

Կրտսնամ, որ ամենքը խօսքով հպարտութենէն կը զգուին, ու մէկը չհետեւիր հեղութեան ու խոնարհութեան. պոռնկութիւն ամենքը կը դատապարտեն, եւ ոչ մէկն ողջախոհ ու պարկեշտ կը տեսնամ. անժուժկալութիւն ամենքը կ'անիծանեն, եւ ոչ ժուժկալ մէկը կը տեսնամ. համբերութիւնն ամենքը կը գովեն, եւ ոչ համբերող մէկը կը տեսնամ. ծուլութիւն ամենքը կ'ուրանան, բայց ամենքն ալ զբօսանքի մէջ կը տեսնամ: Ազահութիւն ամենքը կը հայհոյեն, բայց կը տեսնամ, որ ամենքն ալ յափշտակողներ են:

Նայէ՛ մարդուս թշուառութիւնը. երկիրներ կը նուաճեմ, ուրիշներու թաղաւորութեանը կը տիրեմ, բայց մէկ հիւանդութեան ջերմն չեմ կրնար դադրեցնել:

Մ. ԱԻՐԵԼԻՍԻ ԻՐ ԿՈՄՈԴՈՍ ՈՐԴԻՈՅՆ ԸՐԱՄ ՎԵՐՁԻՆ

ԿՏԱԿԸ.

Որդեա՛կ իմ Կոմոդոս, բաղբս զիս ինքնակալութեան ծայրը հասցնելէն՝ ի վեր՝ երկու բան միշտ աչքիս դիմացն ունեցիր եմ. թշնամիներէս վրէժ չառնել, բարեկամներուս ապերախտ չըլլալ: Ահա իբրեւ կայսր՝ ժառանգ ըրի զքեզ այսչափ գաւառներու. իսկ իբրեւ հայր՝ այս սախտակ կը

Թողում քեզ ժառանգութիւն, զոր Եգիպտոսէն բերած եմ.
Պտղոմէոսէն մնացած հնութիւն մը՝ քրմապետի մը տուած
նուէր, որուն մէջի գրուածները քեզ բարի օրինակներ
ըլլան: —

Տախսակիկն վրայ գրուածի օրինակը .

Ոչ երբէք պատուեցի անիրաւն՝ իր հարստութեանը
համար. եւ ոչ արգարն անարգեցի իր աղքատութեանը
համար:

Ոչ երբէք աղքատին իրաւունքն ոտքի տակ առի՝ հա-
րուստին չգպչելու համար:

Ոչ երբէք մէկու մը պարգեւ տուի՝ սիրտս անանկ ուզե-
լուն համար. եւ ոչ պատիժ՝ իրեն գէմ ըլլալու համար:

Ոչ երբէք չարիքը առանց պատժոյ թողուցի, եւ ոչ
բարիքը առանց վարձատրելու:

Ոչ երբէք յետ կեցայ դատաստանը տեսնելէն՝ որոնք
ինծի դիմեցին, եւ ոչ ողորմելէն՝ որոնք ողորմութեան
արժանի էին:

Ոչ երբէք բարկացած ատենս մէկը պատեցի, եւ ոչ
ուրախութեանս մէջ մէկը վարձատրեցի:

Ոչ երբէք յաջողութեան մէջ անզգոյշ եղայ, եւ ոչ ձա-
խորդութեան մէջ յուսահատեցայ:

Ոչ երբէք շողոքորթ մարդ քովս մօտեցուցի, եւ ոչ բաժ-
բասողներուն ականջ կախեցի:

Ջանացայ միշտ լաւերուն սիրելի ըլլալ, ու չարերուն՝
ահարկու:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

« ՈՐ ԷՆ »

Կ. Պօլսէն մեր բարեկամներէն մին Բիւրակն շարաթա-
թերթի 6 Յունիսի թիւը մեզ ղրկելով՝ մեր ուշագրութիւնը
կըդարձնէ Դ. Խ. (Դ. Խաչկոնց²) ստորագրութեամբ «Որ էն»
վերնագրով մի յօդուածի: Պարոն յօդուածագիրն կ'ասէ (1)
« Դեղփիսի Ապողոնի տաճարին դրան վրայ յունարէն էի

քանդակուած էր որ կընշանակէ «է» կամ «Որ էն» խորհրդաւոր վերտառութիւն մը կամ նշանակ մը»: (2) Երկրորդ՝ Պարոն Դ. Ս. կ'ասէ թէ զԵլիփեան տաճարի այդ կարծեցեալ եի վերնագիրն էական բայի եղակի Գ. Դէմքն է եւ հաւասար է հայերէն «է» բառին: (3) Երրորդ՝ Պլուտարքոսի Դելփեան տաճարի մէկ արձանագրութեան վերայ յօրինեալ գրուածէ մի փոքրիկ հատուած գրաբառ թարգմանութեամբ յառաջ կըբերէ, որոյ մէջէն այլ եւ այլ բառեր լոկ աստղանիշերով նշանակած է, եւ մի քանի տեղ էական բայի եղակի Գ. Դէմք ե ն գլխագրով է նշանակած է: (4) Զորրորդ՝ հայոց եկեղեցեաց ոմանց տաճարի վերայ գրուած կամ քանդակուած «է» նշանակին ակնարկելով՝ կըվերջացնէ իւր «Հնախօսական» ն հետեւեալ կերպիւ. — «Տարբերութիւն մը կա՞յ մեր վարդապետութեան (յայտնի չէ թէ ասել կ'ուզէ մեր եկեղեցւոյ վարդապետութեան թէ իւր անձնական կարծեաց) ու Պլուտարքոսի մեկնութեանց միջեւ, կամ տարբերութիւն մը կըտեսնէ՞ք Քրիստոնեայ եկեղեցւոյն «Որ էն» կամ «է» նշանակին ու Ապոլոնի տաճարին գրան վրայ քանդակուած յունարէն եի նշանակին միջեւ թէ հայերէն «է» եւ թէ յունարէն եի էական բայի եղակի Գ. Դէմքն են: Քրիստոնէութիւնն «է» նշանակին միայն լուսաճաճանչին հեղինակն է »:

Մեր Պօլսեցի բարեկամն ցաւօք սրտի կըզանգատի որ մի կարգ գրագէտներ երբէք աւիթ մը չեն փախցներ մեր եկեղեցին ու քրիստոնէութիւնը ծաղրելու, եւ մասնաւորապէս ցաւ կըյայտնէ որ երբեմն քրիստոնէական ոգւով խմբագրեալ Բիւրակն՝ այժմ հակաքրիստոնէական յօդուածներ հրատարակելէ չի խորշիւր:

Մեզ համար շատ քիչ նշանակութիւն ունի թէ անհատ մարդիկ կամ մի շարթաթաթերթ ի՛նչ ուղղութեան կըհետեւի՝ ի մասին կրօնի, բայց մեզ համար մեծ նշանակութիւն ունի երբ յանուն գիտութեան եւ հնախօսութեան քրիստոնէութիւնը ստորնացնելու եւ հեթանոսութեան հաւասարելու եւ մինչեւ իսկ ստորակարգելու ջանքեր կ'անեն Պարոնայք Դ. Ս. եանք: Ուստի՝ ի միամտութիւն մեր Պօլսեցի բարեկամին եւ թերեւս այլոց բազմաց, կըվստահացնեմք որ (1) Դելփեան տաճարի գրան վերայ գտնուած արձանագրութիւնն եի չէր. եւ ոչ Դ. Ս. ի եի ն ոչ անդ գտնուած իրական արձանագրութիւնն «ե» կամ «որ են» կընշանակէ: Դելփեան տաճարի արձանագրութիւնն

էր պարզապէս յունական արիաբետաց հինգերորդ գիրն որ Եպսիլոն կը կոչուի եւ կը գրուի E : (2) Երկրորդ՝ յունական եի կամ աւելի լաւ եի բառն էական բայի եզակի Գ. դէմքը չէ, եւ հետեւաբար չի կրնար հայերէն ե բառին հաւասար լինել : (3) Պլուտարքոսէն յառաջ բերած թարգմանութիւնն ազաւաղեալ է եւ ամենեւին բնագրի միտքը չի յայտնել : Այսպէս լինելն զարմանալի չէ ամենեւին. քանզի յունարէն Բ. դէմքն Գ. դէմքէն որոշել չկրցող մի «հնախօսէ» այսքանն իսկ սպասելու չէր : Այս տղայական սխալներ, որ մինչ ցարդ կը կարծէինք թէ միայն դպրոցաց մէջ կը գործուին ու կ'ուզողուն, մէկ կողմ թողնելով՝ բուն խնդրոյն մօտենանք : Նոյնպէս մէկ կողմ կը թողու մք Գ. Խ. ի ծաղրածական դիտողութիւն թէ քրիստոնէութիւնը միայն լուսաճաճանչի հեղինակն է՝ իբրեւ անվայել իմն եւ արտաքոյ ուսումնական պատշաճութեան :

Նախ եւ յառաջ «է» կամ «Որ էն» վերտառութիւն կամ ստուածային անուն քրիստոնէական եկեղեցւոյն սեփական չէ : Եթէ Պարոն Գ. Խ. Հին Կտակարանի Ելից գիրքը կարգացած լինէր, նա պիտի անմիջապէս յիշէր որ այդ անունն զառաջինն յիշուած է Գզլիսոյն 14 տան մէջ. այսինքն հազար հինգ հարիւր սարի նախ քան զչինութիւն Դելփեան տաճարին, Աստուած Մովսիսին տուած էր այդ «Որ էն» անունը որով ինքզինքն կը յայտնէր որդւոցն Իսրայէլի : Հետեւաբար «Որ էն» հրէական է եւ ոչ թէ քրիստոնէական, ինչքան որ քրիստոնէական եկեղեցւոյ մէջ պահուած շատ ուրիշ հրէական իրաց պէս, «Որ էն» նշանակն եւս խորհրդապէս գործ կ'ածուի յեկեղեցւոյ :

Գալով Դելփեան տաճարի արձանագրութեան, տեսանք որ իսկական գրուածն էր ստկապէս մի Եպսիլոն E որ շատ բան կրնայ նշանակել, եւ յոյն իմաստասիրաց մտածմանց եւ ենթադրութեանց զարաւոր առարկայ եղած է : Պլուտարքոս, որ քրիստոնէութեան առաջին դարու մէջ ապրեցաւ, յոյն փիլիսոփայից յայտնած այլ եւ այլ կարծիքներն Գ. Խ. էն յիշեալ գրութեան մէջ յառաջ կը բերէ, եւ՝ ի վերջոյ իւր անձնական կարծիքը կը յայտնէ. եւ եթէ Պարոն Գ. Խ. անկողմնակալ լինէր (թերեւս պէտք է ասել՝ կարող լինէր), պէտք էր Պլուտարքոսի ամբողջ ճառի միտքն կամ բովանդակութիւնն հազորդէր Բիւրակնի ընթերցողաց, եւ ոչ թէ միայն վերջին մասին մէկ փոքրիկ հատուածին ազաւաղեալ եւ կցկտուր թարգմանութիւնն :

Զիարդ եւ իցէ, տեսնենք Պլուտարքոս ի՛նչ կ'ասէ :

Յիշեալ արձանագրութիւնը, կըսկսի Պլուտարքոս, չէր կարող պատահամբ գրուած լինել. հետեւաբար պէտք է յամենայն դէպս իբրեւ խորհրդաւոր վերտառութիւն համարել նման Ապոլոնեան տաճարի բոլոր միւս վերտառութեանց : Յետոյ այլ եւ այլ փիլիսոփայից կարծիքները կը յայտնէ զրուցատրութեան ձեւով : Ոմանք կ'ասեն Ե գիրն իբրեւ 5 թուանշանը կարգալով՝ յունական հինգ նշանաւոր փիլիսոփայից կ'ակնարկէ . այլք կ'ենթադրեն աստեղագիտական նշանակութիւն, Ե գիրն յունական ձայնաւորաց երկրորդը լինելով՝ կը համարին համաստեղութեանց երկրորդին, այսինքն, արեգական, ակնարկող : Ե ի հնումն «եթէ» բառի նշանակութեամբ գործ կ'ածուէր, որ Պլուտարքոսի ժամանակ ե՛ի կը գրուէր : Ուստի ոմանք կը համարին զայն իբրեւ մաղթանք «եթէ Տէր կամի» : Այլք տրամաբանական նշանակութիւն կը տան . եւ ոմանք թուաբանական, իբրեւ հինգերորդ տառ 5-2x3 կամ 5x2-10, կամ երաժշտական մտօք յունական հնգեակ չափն . կատ՝ աշխարհիս հինգ ցամաքներ, կամ բնութեան հնգասեւ կենդանիք, տարերք աշխարհի կամ զգայարանք մարդոյ եւ այլն : Այս բոլոր կարծիքներ մի ըստ միով յառաջ բերելով եւ քննելով, Պլուտարքոս կարի անհաւանական կը համարի զայնս : Ի վերջոյ իւր անձնական կարծիքը կը յայտնէ . Ե գիրն, կ'ասէ, ինչպէս ՚ի հնումն ե՛ի (εϛϛ) կը կարդացուէր, նոյնպէս եւ էական բայի եզակի Բ. դէմք «դու ես» կը նար նշանակել . եւ հաւանական է որ նախնիք այդ մտօք քանդակած են զայն Ապոլոնի տաճարի դրան վերայ իբրեւ մաղթանք առ Ապոլոն, նշանակելով այդու Աստուծոյ իրական եւ մնայուն գոյութիւնն, հանդէպ մեր վաղանցիկ եւ կորստական պոյութեան : Նա գոյութիւն ունի ոչ թէ ՚ի ժամանակի, այլ ՚ի յաւիտեան . անվախճան եւ անփոփոխ մշտնջենաւորութիւն է նորա գոյութիւնն : Մի է Աստուած եւ ոչ բազում, թէպէտ եւ նորա երեւոյթներն շատ են : Ե՛ի կամ դու ես բառն Աստուծոյ յաւիտեական եւ անփոփոխ միութիւնը մեր առջեւ կը դնէ եւ մեր բոլորանուէր երկրպագութիւնը կը պահանջէ :

Հիմա մեր Պօլսեցի բարեկամն կարող է պատասխանել Դ. Խ. ի հարցումն՝ թէ «տարբերութիւն մը կը տեսնէ՞ք քրիստոնեայ եկեղեցւոյն «է» նշանակին եւ Ապոլոնի տաճարի դրան վրայ քանդակուած նշանակին միջեւ» : Նա

պիտի տեսնէ որ«է» ի գաղափարն որպէս եւ նշանակն հազարաւոր տարիներ յառաջ յայտնուած էր իսրայէլեան ազգին . եւ Պլուտարքոսի ճառէն կրտսնուի որ Դելփեան տաճարի յիշեալ արձանագրութիւն մինչեւ քրիստոնէութեան առաջին դարն ոչ ոք համարձակած էր Աստուծոյ վերագրել : Իսկ ինքն Պլուտարքոս , ինչպէս պիտի տեսնենք երբ Դ . Խ . իւր խոստացեալ յօդուածն Նոր—Պլատոնական կամ «Ալեքսանդրացիական» զպրոցի վերայ հրատարակէ , իւր ունեցած միաստուածութեան գաղափարն զլիաւորաբար 'ի սփիւռս հեթանոսաց ապրող յունախօս հրէաներէ եւ Հին ,տակարանի յունական (Նօթանասնից) թարգմանութեան շնորհիւ ստացած էր : Նոր—Պլատոնականութիւնն վերջին ճիգն էր յոյն իմաստասիրաց կողմանէ հեթանոսութիւնն աղնուացնելու եւ սպառնացող քայքայումէ ազատելու , նման այն փորձերուն զորս Հնդկաստանի այժմեան Բրամո-Սէմաջ աղանդն կրփորձէ Բրահմինական կրօնն կերպիւ իմն պահպանել , կամ Պարսից Բաբիները կրփորձեն իւրեանց ազգային կրօնքն բարեփոխելու : Ուստի զարմանալի չէ որ Պլուտարքոս միաստուածութեան գաղափարն 'ի հրէից եւ 'ի քրիստոնէից գողանալով՝ կ'աշխատի Դելփեան արձանագրութեան բռնազօսիկ մեկնութիւն մի տալ որ իւրմէ յառաջ ոչ ոք տուած չէր : Եթէ Դ . Խ . իւր յունագիրտութեան տխուր պատկերը հրատարակած չլինէր , պիտի հարցնէինք իրեն թէ քանի որ իւր յիշած փոխառութիւնն միմիայն յունական լեզուաւ կրնար եղած լինել , ինչպէս Նլից գրոց հօ օն , զոր մերնախնիք «որէն» ով թարգմաններ են , Դելփեան տաճարի եի կառ ե նշանակին կընմանեցնէ . մին եզակի Բ . դէմք է իսկ միւսն դերբայ կամ բայանուն մի է բոլորովին տարբեր հնչմամբ եւ ձայնիւ : Բայց 'ի գուր ժամալաճառ չլինիմք ոչ մենք ոչ Պարոն Դ . Խ .

Այսքանը կրբաւէ մեր Պօլսեցի բարեկամին միտքն անդորրելու եւ վստահացնելու որ Դ . Խ . անվնաս ոմն է , որոյ իմաստասիրական յօդուածներն այնքան լրջութեամբ կարդալու չէ յետայսու :



